# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1

№ 861-Ա « 11 » մարտի 2025 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԻԿ ԵՐԳԻՉՆԵՐ» ՄԱՆԿԱԿԱՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետով.

1.Հաստատել՝

1)«Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները՝ համաձայն հ.հ.1-2 հավելվածների.

2)«Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Հանձնարարել «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին.

1) եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով «Պարգևատրում» հոդվածի գծով նախատեսված գումարները, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին նախատեսված դրամական միջոցների ազատ մնացորդներն օգտագործել բացառապես Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական ու աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունների հետ համաձայնեցնելուց հետո,

2) բացառել կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված հոդվածների գծով գերածախսերը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի

վարչության պետի ու «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**